ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, **www.foi.am**

20.07.2023
351-24

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բադասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բադասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Խնդրում ենք տրամադրել 2022 թվականի ընթացքում **բջջային հեռախոսներ** (կոդ 8517) ՀՀ ներմուծող և ՀՀ-ից արտահանող ընկերությունների առաջին տասնյակը (10 խոշորագույն ներկրողների / արտահանողների ցանկը) ՝ նշելով ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, ներմուծման/արտահանման դրամային և ֆիզիկական (քանակական) ծավալները, ներկրման և արտահանման երկրները։
2. Խնդրում ենք տրամադրել 2022 թվականի ընթացքում **մոնիտորներ** և **պրոյեկտորներ** (կոդ 8528) ՀՀ ներմուծող և ՀՀ-ից արտահանող ընկերությունների առաջին տասնյակը (10 խոշորագույն ներկրողների / արտահանողների ցանկը) ՝ նշելով ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, ներմուծման/արտահանման դրամային և ֆիզիկական (քանակական) ծավալները, ներկրման և արտահանման երկրները։
3. Խնդրում ենք տրամադրել 2022 թվականի ընթացքում **անօդաչու թռչող սարքեր** (կոդ 8806) ՀՀ ներմուծող և ՀՀ-ից արտահանող ընկերությունների առաջին տասնյակի ցանկը (10 խոշորագույն ներկրողների / արտահանողների ցանկը)՝ նշելով ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, ներմուծման/արտահանման դրամային և ֆիզիկական (քանակական) ծավալները, ներկրման և արտահանման երկրները։
4. Խնդրում ենք տրամադրել 2022 թվականի ընթացքում **կիսահաղորդիչներ** (կոդեր 8542, 8534) ՀՀ ներմուծող և ՀՀ-ից արտահանող ընկերությունների առաջին տասնյակի ցանկը՝ նշելով ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, ներմուծման/արտահանման դրամային և ֆիզիկական (քանակական) ծավալները, արտադրող ընկերության անվանումը, ներկրման և արտահանման երկրները։
5. Խնդրում ենք տրամադրել 2022 թվականի ընթացքում ՀՀ-ում **կիսահաղորդիչներ** արտադրած ընկերությունների ցանկը՝ նշելով ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, և արտադրման ծավալները։

Խնդրում ենք տվյալները տրամադրել ապրանքատեսակների տասանիշ կոդերի համաձայն (ՀՀ Կառավարության թիվ 1406 որոշում, 2014թ.)։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան